



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից “03”. 06. 2016 թ. (արձ. № 10)	Վավերացնում եմ ՀԱԱՀ ռեկտոր _____ Ա. Թարվերդյան “06”. 06 . 2016 թ.
---	--

**ՀԱԱՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան

Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գնահատումը և վերանայումը ՀԱԱՀ ռազմավարական պլանավորման և կառավարման գործընթացի անբաժան մասն է:

Համալսարանի զարգացման ռազմավարության իրականացման գնահատումը կատարվում է ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկման միջոցով:

Մշտադիտարկման գործընթացը իրականացվում է “Ռազմավարական ծրագրի իրականացման մշտադիտարկում, չափումներ և գնահատում” ընթացակարգի համաձայն:

Իրականացվող ռազմավարության գնահատումը կայանում է հետևյալ հիմնական հարցերին պատասխանելու մեջ՝

- *Կբերի արդյոք ընտրված և իրականացվող ռազմավարությունը համալսարանի կողմից սահմանված նպատակների ձեռքբերմանը:*
- *Իրականացվող ռազմավարությունը համապատասխանո՞ւմ է կրթական ոլորտում դրվող պահանջներին:*
- *Ընտրված ռազմավարության համապատասխանո՞ւմ է համալսարանի կադրային ներուժին և նյութատեխնիկական հնարավորություններին:*

Ռազմավարության իրականացման արդյունքները գնահատվում են համալսարանի ամբողջ գործունեության գնահատման միջոցով (ռազմավարության իրականացման «պլան-փաստ» ստուգում, հարցումների բավարարվածության մակարադակի գնահատում, SWOT-վերլուծություն և այլն):

Գնահատման արդյունքների հիման վրա իրականացվում է ռազմավարական ծրագրի իրականացման վերանայումը, որը սովորաբար իրականացվում է յուրաքանչյուր հինգ տարին մեկ:

Վերանայմանը ուղղված բոլոր փոփոխությունները հիմնվում են համալսարանի գործունեության վերլուծության և գնահատման, ինչպես նաև կառուցվածքային ստորաբաժանումների կողմից տրված առաջարկությունների վրա:

Համալսարանի ռազմավարական ծրագրի վերանայման վրա կարող են ազդել համալսարանի ենթակառուցվածքային, ինչպես նաև համաշխարհային կրթական համակարգում տեղի ունեցող փոփոխությունները:

Նպատակը և խնդիրները

Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման և վերանայման *նպատակն է* համալսարանի կողմից իրականացված ռազմավարության մշտադիտարկումը, վերլուծությունը, գնահատումը և վերանայմանն ու բարելավմանն ուղղված գործողությունների պլանի մշակումը ու համապատասխան միջոցառումների իրականացումը:

Խնդիրներն են՝

- Իրականացնել համալսարանի գործունեության մշտադիտարկում, կատարել համապատասխան չափումներ:
- Կատարել ռազմավարական ծրագրի պլանային և փաստացի ցուցանիշների համեմատում, ըստ դրա առկա խնդիրների վերհանում:
- Իրականացնել համալսարանի շահակից կողմերի կարիքների բացահայտում (շահակիցների անկետավորում):
- Մշտադիտարկման արդյունքների հիման վրա իրականացնել համալսարանի գործունեության վերլուծություն և գնահատում:
- Վերհանել ռազմավարական ծրագրի ուժեղ և թույլ կողմերը, բացահայտել հնարավորությունները և վտանգները՝ ապագայում նոր ռազմավարության մշակման գործընթացում օգտագործելու համար:
- Ռազմավարական ծրագրի վերանայման նպատակով կազմել ռազմավարության վերանայման պլանի նախագիծ և տրամադրել կառուցվածքային ստորաբաժանումներ՝ քննարկումների արդյունավետության ապահովման համար:
- Վերանայմանը ուղղված կազմակերպել լայն քննարկումներ և արդյունքները ներկայացնել գիտական խորհրդի քննարկմանը:

Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման և վերանայման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը՝

- Ընտրել տվյալների ցանկը և առանձնացնել տվյալների աղբյուրները, որոնք անհրաժեշտ են ռազմավարական ծրագրի իրականացման գնահատման համար:
- Գնահատվող տվյալների հավաքագրման համար կազմել պլան-ժամանակացույց:
- Նկարագրել, թե ինչպես են գնահատման ենթակա տվյալները օգտագործվելու ռազմավարական ծրագրի իրականացման վերահսկման համար:
- Նկարագրել, թե ինչպես են գնահատման արդյունքները (ներառյալ շահակիցներից ստացված արձագանքը) օգտագործվելու հնգամյա ռազմավարական ծրագրի վերանայման համար:

Կիրառման ոլորտ

Քաղաքականությունը կիրառվում է համալսարանի ռազմավարական պլանավորման և կառավարման ոլորտի վրա:

Քաղաքականության իրականացում

Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի գնահատման և վերանայման գործընթացը պետք է երաշխավորի ռազմավարական ծրագրի իրականացման արդյունավետության որոշումը և ՀԱԱՀ զարգացման հեռանկարային պլանների առավել արդյունավետ մշակումը, հաշվի առնելով համալսարանի գերակա խնդիրները և դրանց համար տրվող լուծումները:

Պատասխանատվություն

Համալսարանի զարգացման ռազմավարական ծրագրի գնահատման և վերանայման գործընթացը իրականացնելու համար ստեղծվում է աշխատանքային խումբ/հանձնաժողով, որը իրականացնում է ռազմավարական ծրագրի վերլուծություն և գնահատում:

Գնահատման փուլում որոշվում է համալսարանի ռազմավարության ընթացիկ վիճակը: Գնահատման գործընթացի վերջնարդյունք է համարվում պլանի և ծրագրի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և վտանգների բացահայտումը:

Համալսարանը ներգրավում է իր շահակիցներին զարգացման պլանի և ծրագրի գնահատման և վերանայման գործընթացում և երաշխավորում, որ տվյալ գործընթացը ապահովում է ռազմավարական վերլուծությունը և նոր հեռանկարային պլանների մշակումը:

Համալսարանի զարգացման հեռանկարային պլանի և ծրագրի գնահատման և վերանայման քաղաքականության մշակման, ներդրման, իրականացման և վերլուծության համար պատասխանատու են՝

- Համալսարանի ռեկտորը (գործընթացի ղեկավար),
- Պրոռեկտորները ըստ ուղղությունների (գործընթացի պատասխանատուներ),
- Աշխատանքային խումբ (գործընթացի իրականացնողներ),
- Գնահատման և վերանայման հանձնաժողովներ (գործընթացի իրականացման վերլուծողների և գնահատողներ),
- Տվյալ ոլորտի համար պատասխանատու այլ շահակից կողմերը, որոնց կարծիքը կարևոր է տվյալ գործընթացի ապահովման համար:

Քաղաքականության վերանայում

Սույն քաղաքականությունը ենթարկվում է վերանայման համալսարանի «Փաստաթղթերի և գրանցումների կառավարում» ընթացակարգի համաձայն:

